2013-2014 ուստարի

# «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը բաղկացած է 30 առաջադրանքից: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների հանրագումարից (առավելագույնը 35 միավոր):

Ստորև ներկայացնում ենք առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների համամասնությունը:

| | Առաջադրանքների տեսակը | Առաջադրանքների քանակը | Առաջադրանքներին տրվող միավորները |
|---|---|---|---|
| 1 | Ընտրովի պատասխանով | 21 | 22 |
| 2 | Կարճ պատասխանով | 9 | 13 |
| 3 | Ընդամենը | 30 | 35 |

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

| | Առաջադրանքների բովանդակային տիպերը | Առաջադրանքների համարները թեստում | Ընդամենը | Գնահատման միավորը |
|---|---|---|---|---|
| 1. | Տարեթվերի, փաստերի և երևույթների իմացություն | 1-8<br>21-27 | 15 | 15X1=15 |
| | | 28-29 | 2 | 2X3= 6 |
| 2. | Պատմական տերմինների և հասկացությունների իմացություն | 9 | 1 | 1X1=1 |
| 3. | Պատմական իրադարձությունների և երևույթների պատճառների և հետևանքների իմացություն | 10 | 1 | 1X1=1 |
| 4. | Աշխատանք սկզբնաղբյուրների հետ | 11-12 | 2 | 2X1= 2 |
| 5. | Պատմական իրադարձությունների և երևույթների ժամանակագրական հաջորդականության իմացություն | 13-16 | 4 | 4X1= 4 |
| 6. | Պատմական իրադարձությունների, երևույթների, փաստերի, տարեթվերի, կրթամշակութային հաստատությունների, վայրերի, ստեղծագործությունների, տեղանունների, անձնանունների համապատասխանեցում | 17-20 | 4 | 4X1= 4 |
| 7. | Պատմական փաստարկների, պնդումների համադրում, խմբավորում<br>(1 առաջադրանք -կազմված՝2 ճիշտ փաստից) | 30 | 1 | 1X2=2 |
| 8. | Ընդամենը | | 30 | 35 |

*Ստորև ներկայացնում ենք 28-29-րդ առաջադրանքների գնահատման առանձնահատկությունները:*

28-րդ և 29-րդ առաջադրանքները կարճ պատասխաններ պահանջող առաջադրանքներ են: Այս առաջադրանքների առանձնահատկությունն այն է, որ մեջբերված դասագրքային տեքստում բացակայում են 3 բառ (տարեթիվ, անձնանուն կամ տեղանուն), որոնք աշակերտն ինքը պետք է լրացնի: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

## ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Բ. Հարությունյան, «Մակմիլան-Արմենիա», Երևան, 2007 թ.:
2. «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Բ. Հարությունյան, «Մակմիլան-Արմենիա», Երևան, 2008 թ. :
3. «Հայոց պատմություն», Նոր շրջան, 8-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Վ. Բարխուդարյան, «Մակմիլան-Արմենիա», Երևան, 2007 թ.:
4. «Հայոց պատմություն», Նորագույն շրջան, 9-րդ դասարանի դասագիրք, խմբագիր՝ Վ. Բարխուդարյան, Երևան, 2008 թ.:


Առաջադրանքների ճիշտ պատասխանը որոշվում է բացառապես վերոհիշյալ դասագրքերում առկա նյութի հիման վրա:

*Ծանոթագրություն*

*8-րդ և 9-րդ դասարանների առաջադրանքները կազմված են «Հայոց պատմություն» առարկայի նոր Չափորոշչին և ծրագրին (հաստատված 20.01.2012թ. N39 Ա/Ք հրամ.) համապատասխան:*